ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 Հունվար 2022թվականի N 11-Ա

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 54-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և հաշվի առնելով Նոր Հաճըն համայնքի ղեկավարի առաջարկությունը, Նոր Հաճըն համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Նոր Հաճընի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի «Նոր Հաճըն համայնքում 2022 թվակնի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» N 54-Ա որշոման մեջ կատարել փոփոխություն և 1-ին կետում ավելացնել հետևյալ ենթակետերը.

(6).Նախադպրոցական և արտադպրոցական հաստատություններ հաճախող միակողմանի ծնողազուրկ անձանց նկատմամբ նույնպես կիրառել տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափ:

(7).Նախադպրոցական և արտադպրոցական հաստատություններ հաճախող Արցախյան պատերազմում և դրանից հետո զինվորական պարտականությունները կատարելու ժամանակ վիրավորված, ՀՀ սահմանային առաջնագծում ծառայող զինծառայողների ընտանիքների անդամների նկատմամբ կիրառել դրույքաչափի նվազեցման արտոնություն՝ տվյալ խմբի տեղական վճարի 50% -ի չափով:

(8).Արվեստի դպրոցի միաժամանակյա երկու տարբեր բաժիններում սովորող երեխաների համար սահմանել ցածր վարձավճարով բաժնի ուսման վարձի 50% զեղչ:

(9).Նախադպրոցական և արտադպրոցական հաստատություններ հաճախող մեկ ընտանիքից երկու և ավելի սովորողի դեպքում երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար սահմանել 50% զեղչ:

2 . 1-ին կետի 2-րդ ենթակետի մեջ ավելացնել (ե) կետը հետևյալ բովանդակությամբ՝

1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող ծնողի երեխա է:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԴԱԼՅԱՆ ՌՈՄԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹՈՎՄԱՍ

ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԻ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԳՅՈՒԼԻՆՅԱՆ ՍԱՀԱԿ

ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ԻՍՊԻՐՅԱՆ ԱՆԻ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷՄՄԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՆՆԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍՈՖԻԱ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

Համայնքի ղեկավար՝ ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ